

Մեր ծանօթ աղբերաց մէջ՝ այս խընդրոյն նկատմամբ առաջին անգամ այդ ասորի գրչին կողմանէ կը հանդիպինք օտարաց հակառակութեան, զոր յետոյ Լատինք եւս կը ժառանգեն: Ասոնք ըստ Կիրակոսի թագ զրկելով մեր նորապսակ մեծին Լեւոնի, պահանջեցին ի փոխարէն երեք ծխական փոփոխութիւններ, որոց մին էր «ոչ լուծանել զճրագալոյցն Ծնընդեան եւ զՅարութեան, բայց միայն ձրկամբք եւ ձիթով»: Եւ զորս տասներկու եպիսկոպոսներ յանձն առին երդմամբ (75): Նոյն պահանջը քանի մը տարի վերջ կը կրկնէր Վրաց Զաքարէ իշխանն ալ, որուն զիջան Լեւոն Բ, Գաւիթ կթղ. եւ իւր կղերը (նոյն, 83): Օտարաց ընդդիմութիւնն ուրեմն ձկան ու ձիթոյ դէմ չէր, այլ դարձեալ լուեկայն ակնարկուած կրեղինաց: Մերոց մասնական զիջողութիւնք սակայն չէին կրնար փոխել ազգին սովորութիւնը, զոր Լատինք կը շարունակէին բամբասել Ա. Կոստանդնի օրով ալ (Տուռ. 827):

Ապարդիւն պիտի մնային նաեւ քանի մ'ազգայնոց հայ սովորութեան հակառակ ջանքերը, որոցմէ երիցագոյնն էր խոսրովիկ Բ դարուն: Սա ջատագով յիսնօրեայ յարատեւ ու խիստ պահեցողութեան (աստ,